ՀՀ կրթության գիտության մշակույթի
և սպորտի նախարարության

<< Վանաձորի Գրիբոյեդովի

անվան N 11 ավագ դպրոց>>
ՊՈԱԿ

Республика Армения
Министерство образования науки культуры
и спорта
Лорийская область
<< Ванадзорская старшая шк N 11 им. Грибоедова >> ГНО

REPUBLIC OF ARMENIA

VANADZOR HIGH SCHOOL № 11
AFTER GRIBOEDOV
OF MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
NATIONAL NON-TRADING ORGANIZATION

2005Վանաձոր, Ազատամարտիկների պ.1. Vanadzor, Azatamartikneri 1. Ванадзор Азатамартикнери 1

հեռ. / tel / тел. (+374322) 2-09-37, 2-21-30
E-Mail: vanadzor11@schools.am

<08 >_____02_____2023թ

Կազմված է
Պատասխանատու ստորաբաժանման կողմից

«Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց» ՊՈԱԿ

# ՀՐԱՎԵՐ

«Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային ծրագրի ամփոփման նպատակով

Հարգելի մասնակից, Ա/Ձ Արթուր Շահմուրադյան տնօրեն Ա.Շահմուրադյան

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու համակարգչային ծրագրի ամփոփման նպատակով ՎՊՈԱԴ-ՄԱԾՄ-2023/4 ընթացակարգին:

Հայտնում ենք,որ գնման ապրանքի վերաբերյալ Ձեր գնի առաջարկը համաձայն տեխնիկական բնութագրի անհրաժեշտ է ներկայացնել «Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ, ք.Վանաձոր,Ազատամարտիկների պ1 հասցեով

Դպրոցի տնօրեն Ն.Ա.Սահակյան

Կ.Տ.

Հավելված N 1
Վ11ԱԴ -ՄԱՀՄ-20223/4 ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ԴԻՄՈՒՄ՝

*ընթացակարգին մասնակցելու*

Արթուր Շահմուրադյան ԱՁ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

ՀՀ ԿԳՄՄՆ <<Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ-ի կողմից Վ11ԱԴ -ՄԱՀՄ-20223/4
ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

ընթացակարգի և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Արթուր Շահմուրադյան ԱՁ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

ՀՀ ռեզիդենտ:
երկրի անվանումը

Արթուր Շահմուրադյան ԱՁ -ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 66905576
մասնակցի անվանումը
հարկի վճարողի հաշվառման համարը

Արթուր Շահմուրադյան ԱՁ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ Artur Shahmuradyan <shahmuradyan.artur@yandex.com> :
մասնակցի անվանումը
էլեկտրոնային փոստի հասցե

Արթուր Շահմուրադյան ԱՁ տնօրեն Ա.Շահմուրադյան
Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը)

Կ. Տ.

# Գնի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2023 /4 ծածկագրով հրավերը

Ա/Ձ Արթուր Շահմուրադյան

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գնով.

| Չափաբաժինների համարները | Գնման առարկայի անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավոր | Քանակ | Ինքնարժեք | Առաջարկված գինը /տառերով/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | համակարգչային ծրագրի ամփոփում | Ծրագրային ծառայություն | Հատ | 1 | | 30000/երեսուն հազար/ |

Կատարող

Ա/Ձ Արթուր Շահմուրադյան

հասցե-ք. Վանաձոր, Աբովյան 39

Էվոկաբանկ

hh 1660011989010100

ՀՎՀՀ-66905576

Ա.Շահմուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ

<<...10...>>.....02.....2023.....թ.

(ամսաթիվը, ամիսը)

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2023 /4

# ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ք.Վանաձոր 15.02.2023թ.

22 ԿԳՄՄՆ <<Վանաձորի Գրիբոյեդովի անվան N 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ (այսուհետ՝ «Կազմակերպություն»), ի դեմս Կազմակերպության տնօրեն՝ Նարինե Սահակյանի, գործող Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից և Ա/Ձ Արթուր Շահմուրադյան-ն, ի դեմս Ա.Շահմուրադյանի (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1.Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունները /ծրագրի ամփոփում/ (այսուհետ «Ծառայություններ»), գնի առաջարկով սահմանված գներով, քանակով և սահմանված այլ պայմաններով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

1.2.Մատուցվելիք Ծառայությունների ժամանակահատվածը նշվում է Հավելված N2-ում

1.3.Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի և Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման վերաբերյալ հանձման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի փաստը ֆիքսելու ակտը ստորագրելու պահից:

## 2.Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. *Կատարողը պարտավոր է՝*

2.1.1.Ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.1.2.Ծառայությունները մատուցել սույն Պայմանագրի Հավելվածում նշված ժամանակահատվածում և ամբողջ ծավալով,

2.1.3.Ծառայությունների մատուցումն ավարտելուց հետո, 10 (տասը) աշխատանքային օրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել Ծառայությունների իրականացման հետ կապված անհրաժեշտ բոլոր հաշվետվություն-ները,

2.1.4.Հաշվետվությունների վերաբերյալ Պատվիրատուի գրավոր առարկությունները ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները, ինչի մասի գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.2. *Կատարողն իրավունք ունի՝*

2.2.1.Ինքնուրույն և ազատ իրականացնել իր գործողությունները՝ չշեղվելով սույն պայմանագրով իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարման սահմաններից և շրջանակներից,

2.2.2.Մատուցված ծառայության համար ստանալ սույն Պայմանագրով նախատեսված վարձատրությունը

2.3. *Պատվիրատուն պարտավոր է՝*

2.3.1.Ծառայությունների դիմաց վճարել սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով և սույն Պայմանագրի Հավելվածում նշված ժամկետներում ու գնին համապատասխան,

2.3.2.Որևէ կերպ չխոչընդոտել կատարողի Ծառայության մատուցմանն ուղղված գործողություններին,

2.4. *Պատվիրատուն իրավունք ունի՝*

2.4.1.Ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը,

2.4.2.Գրավոր պահանջել ընթացիկ և վերջնական հաշվետվություններ սույն Պայմանագրով նախատեսված Կատարողի գործողությունների վերաբերյալ,

2.4.3.Կատարողի կողմից Ծառայությունները ոչ պատշաճ, կետանցով, ոչ լրիվ ծավալով մատուցելու դեպքում իր ընտրությամբ՝

2.4.3.1.Կատարողից պահանջել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնելու թերությունները,

2.4.3.2.Համաչափորեն նվազեցնելու Ծառայությունների համար սահմանված գինը,

2.4.3.3.Կատարողից պահանջել հատուցելու թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը,

2.4.4.Նշանակել՝ եռօրյա ժամկետ թերությունները վերացնելու համար, եթե՝ ծառայությունների մատուցման ժամանակ ակնհայտ է դառնում, որ պատշաճ չի կատարվելու Կատարողի կողմից,

2.4.5.Կատարողի կողմից սույն Պայմանգրի 2.4.4. կետում նշված ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում հրաժարվել սույն պայմանագրից կամ հանձնարարել այլ անձանց վերացնել այդ թերությունները և Կատարողից պահանջել հատուցելու կրված վնասները,

2.4.6.Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց ու պահանջել հատուցելու պատճառած վնասները, եթե՝ Ծառայությունների մատուցման Պայմանագրի պայմաններից Կատարողի կողմից շեղումները կամ մատուցված ծառայությունների այլ թերությունները չեն վերացվել Պատվիրոտուի սահմանված եռօրյա ժամկետում կամ դրանք էական և չվերացվող են:

## 3.Վճարման կարգը

3.1.Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 30000/երեսուն հազար/ << դրամ ներառյալ հարկերը և տուրքերը << օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

3.2Պատվիրատուն մատուցած ծառայության դիմաց վճարում է անկանխիկ , դրամական միջոցը Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցի փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և ակտի հիման վրա:

## 4.Կողմերի պատասխանատվությունը

4.1.Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու կամ Ծառայությունները թերի մատուցելու արդյունքում Պատվիրատուին պատճառված վնասը Կատաարողը հատուցում է << օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 5.Վեճերի լուծման կարգը

5.1.Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են անմիջական բանակցությունների միջոցով, իսկ ընդհանուր հայտարարի չգալու դեպքում՝ դատական կարգով,

5.2.Պայմանագիրը լուծելուն առնչվող վեճերը պետք է լուծվեն << օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1.Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից և նախատեսված տույժի վճարումից, եթե պայմանագրային պարտականությունների կատարումն անհնարին է դառնում Կողմերի կամքից անկախ՝ անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքում, որը ծագել է սույն պայմանգիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Սույն պայմանագրի համաձայն՝ Կողմերը Ֆորս-Մաժորային իրավիճակներ են համարում հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավիճակները:

6.2.Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պայմանագրային պարտավորությունները չկատարող Կողմը պարտավոր է ողջամիտ ժամկետում մյուս Կողմին գրավոր տեղյակ պահել անհաղթահարելի ուժի ազդեցության վերացման մասին:

## 7.Եզրափակիչ դրույթներ

7.1.Սույն պայմանագրի գործողության ժամկետն է՝ 15.02.2023-01.06.2023թ մինչև Կողմերը կատարեն վերջինով ստանձնած պարտականությունները,

7.2.Պայմանգրի պայմանները կարող են փոփոխվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ գրավոր կարգով,

7.3.Սույն պայմանգիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 8.Կողմերի իրավաբանական հասցեները

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ ԿԳՄՄՆ «Վանաձորի Գրիբոյեդովի անվան N 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ | Ա/Ձ Արթուր Շահմուրադյան |
| ք.Վանաձոր, Ազատամարտիկների պուրակ 1, | հասցե-ք. Վանաձոր, Աբովյան 39 |
| Կենտրոնական գանձապետարան | Էվոկաբանկ Վանաձորի |
| h/h900238000534 | մասնաճյուղ |
| ՀՎՀՀ 06909818 | hh 1660011989010100 |
| | ՀՎՀՀ-66905576 |
| տնօրեն Ն.Սահակյան | Ա.Շահմուրադյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |